Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ություն թիվ 4

2013թ. ապրիլի 16-ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի

Օրակարգ.

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը ամբիոններում: /Ձեկ. դեկանի տեղակալ Վ.Վարդանյան/
2. Գիտական զեկուցում:
3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ – Դեկանի տեղակալ Վ.Վարդանյանի հաղորդումը ամբիոններում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ: Զեկուցողը մանրամասն ներկայացրեց մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Նշվեց, որ բացառությամբ երկու ուսանողի մնացած ուսանողները աշխատում են իրենց հաշվետվությունների և թեզերի վրա, ղեկավարները տեղյակ են կատարման ընթաքին և բոլոր ուսանողները կհասցնեն ժամանակին հաջողությամբ պաշտպանել աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1) Ընդունել ի գիտություն Վ.Վարդանյանի հաղորդումը ամբիոններում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ:

2) Եթե վերոհիշյալ երկու ուսանողները չներկայանան պաշտպանության, ապա կհեռացվեն համալսարանից:

2. ԼՍԵՑԻՆ – Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի՝ Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Բաբակ Նադժաֆիխի «Միանկալե թերակղզու (Գորգանի ցամաքալեզվակի) և Կասպից ծովի հարավային հարակից ափերի դինամիկան» վերնագրով թեկնածուական ատենախոսության գիտական հաղորդումը: Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ատենախոսության թեմայով իր կողմից կատարված աշխատանքները, ներկայացրեց համապատասխան եզրակացությունները:

Ատենախոսության թեմայի վերաբերյալ տրված հարցերին հեղինակը տվեց բավարար պատասխաններ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1) Աշխատանքը պետք է մանրամասն խմբագրվի:

2) Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Բաբակ Նադժաֆիխի «Միանկալե թերակղզու (Գորգանի ցամաքալեզվակի) և Կասպից ծովի հարավային հարակից ափերի դինամիկան» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության և տալ համապատասխան եզրակացություն:

ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Սերոբ Արամի Սուջյանի «ԼՂՀ տարաբնակեցման արդի համակարգի ձևավորման նախադրյալներն ու զարգացման հիմնախնդիրները» վերնագրով թեկնածուական ատենախոսության գիտական հաղորդումը: Հեղինակը մանրամասն ներկայացրեց իր ատենախոսության թեմայի ուղղությամբ կատարած աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1) Աշխատանքը պետք է մանրամասն խմբագրվի:

2) Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Սերոբ Արամի Սուջյանի «ԼՂՀ տարաբնակեցման արդի համակարգի ձևավորման նախադրյալներն ու զարգացման հիմնախնդիրները» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության և տալ համապատասխան եզրակացություն:

ԼՍԵՑԻՆ – Էկոլոգիական քիմիայի ամբիոնի ասպիրանտ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ամիր Հաջիալիի «Թափոնաջրերը կայուն և թունավոր աղտոտիչներից տարբեր համակարգերով մաքրման ուսումնասիրություն» վերնագրով թեկնածուական ատենախոսության գիտական հաղորդումը: Հեղինակը մանրամասն ներկայացրեց ատենախոսության հիմնադրույթները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Էկոլոգիական քիմիայի ամբիոնի ասպիրանտ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ամիր Հաջիալիի «Թափոնաջրերը կայուն և թունավոր աղտոտիչներից տարբեր համակարգերով մաքրման ուսումնասիրություն» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության և տալ համապատասխան եզրակացություն:

ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Մեհրդատ Բորդ-բար Թահերգուրաբի «Աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը Եվրոպայի քաղաքական քարտեզի սահմանների փոփոխության վրա սառը պատերազմից հետո (աշխարհաքաղաքական ուսումնասիրություն)» վերնագրով թեկնածուական ատենախոսության գիտական հաղորդումը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1) Աշխատանքը պետք է մանրամասն խմբագրվի:

2) Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Մեհրդատ Բորդ-բար Թահերգուրաբի «Աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը Եվրոպայի քաղաքական քարտեզի սահմանների փոփոխության վրա սառը պատերազմից հետո (աշխարհաքաղաքական ուսումնասիրություն)» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության և տալ համապատասխան եզրակացություն:

3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ասպիրանտ Էլմիրա Արմենի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ասպիրանտ Էլմիրա Արմենի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ՀՀ Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական ուղիները» վերնագրով:

2. Գիտական ղեկավար նշանակել աշխ. գիտ. դոկտոր Հովիկ Յախշիբեկի Սայադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ